ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

23.02.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը - մարզպետի տեղակալ
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Լ.Մաթոսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Աբրահամյանին. աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լ.Մաթոսյանին

Ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն տնակներում բնակվող, կարիքավոր քաղաքացիների բնակապահովման իրավական կարգավորման, դրանց մասով պայմանագրերի կնքման, ժամկետների և օրինականության վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Լոռու մարզի կտրվածքով առողջապահական համապարփակ ապահովագրության շահառուների թվի և հատկացված գումարի վերաբերյալ, տարանջատելով՝ մինչև 50000 դրամի և 50000

դրամից բարձր գումարի չափով ապահովագրական վճարների տրամադրման վերաբերյալ տեղեկատվությունը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, նաև՝ մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն խոշոր ապառքներ ունեցող անձանց կողմից պարտավորությունների կատարման գործընթացի իրականացման ընթացքի վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Ներկայացնել ամբողջական տեղեկատվություն դպրոց և մանկապարտեզ տանող ճանապարհների, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող տարբեր ծրագրերի և շինաշխատանքների կատարման վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

5.1 Գյուղատնտեսական սեզոնին ընդառաջ իրականացնել շրջայցեր, կազմակերպել հանդիպումներ ազգաբնակչության հետ, ներկայացնել տեղեկատվություն և պարզաբանումներ ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ:

5.2 Ներկայացնել ամբողջական տեղեկատվություն դեպի ինտենսիվ գյուղատնտեսություն տանող ծրագրերի արդյունքների և արդյունավետության վերաբերյալ:

6. Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Շարունակել հանդիպումները և շփումները մարզի համայնքներում Ղարաբաղից բռնի տեղահանված և մարզում բնակություն հաստատած բնակիչների հետ, ուսումնասիրել կարիքները, առաջարկությունները և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99